ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2019 թվականի հունվարի 15-17**
4.	Հրավիրող կողմը. **ՀՀ փոխոստիկանապետի գլխավորած պատվիրակության կազմում**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Գերմանական կողմի հետ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկին ընդառաջ բանակցությունների անցկացում**
6.	Քննարկված թեմաները. **Այցի ընթացքում կայացած հանդիպումների քննարկման հիմնական թեմաներն էին ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման երկխոսության հնարավոր մեկնարկը և այս համատեքստում ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման ընթացքը: Ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման լիազոր մարմինը հայկական կողմից Միգրացիոն ծառայությունն է:** **Միգրացիոն ծառայության իրավասությունների ոլորտի քննարկման հիմնական թեմաներն առնչվում էին ռեադմիսիոն էլեկտրոնային համակարգի գործարկմանը, անձանց նույնականացման խնդիրներին, գերմանական կողմի աջակցությամբ հնարավոր վերաինտեգրման ծրագրերի նախաձեռնմանն ու իրականացմանը, ՀՀ-ԵՄ ռեադմիսիոն համաձայնագրի իրականացման ՀՀ-ի և Գերմանիայի միջև ստորագրվելիք կիրարկման արձանագրության բանակցային գործընթացին և այլ խնդիրներ, որոնք կմանրամասնվեն հաջորդ կետում: Բարձրացվել է նաև Հայաստանն «անվտանգ երկրների ցանկում» ընդգրկելու մասին հարցը:**
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. **Հանդիպումների ընթացքում ՄԾ պետի կողմից նշվել է, որ առաջիկա տասնօրյակների ընթացքում ներդրվելու է Ռեադմիսիոն հայցերի քննության էլեկտրոնային համակարգը և առաջարկվել է գերմանական կողմին միանալ այդ համակարգին: Հիմնական խնդիրն այս հարցում կապված է Գերմանիայի դաշնային կառուցվածքի հետ, այսինքն՝ արդյոք**

գերմանական կողմը համակարգին միանալու է որպես մեկ օգտատեր (հայց ներկայացնող և ընդունող), թե միանալու են առանձին երկրամասերը (լանդերը): Բանակցությունների ընթացքում գերմանական կողմը հայտնեց, որ համակարգին միանալու են առանձին երկրամասերը: Այս մասին նշեց նաև ԳԴՀ ներքին գործերի նախարարների համաժողովի նախագահ, Սաքսոնիա-Անհալթ երկրամասի ներքին գործերի նախարար Հոլգեր Շտալկնեխտը: Այս առնչությամբ ՄԾ պետի կողմից տրվել է համապատասխան հանձնարարական. Էլեկտրոնային համակարգին միանալու համար ԵՄ անդամ երկրների և Գերմանիայի երկրամասերի համապատասխան մարմինների նամակները կուղարկվեն այս շաբաթվա ընթացքում: Հոլգեր Շտալկնեխտի հետ հանդիպմանը նշվեց նաև, որ Սաքսոնիա-Անհալթ երկրամասում ներկայումս գտնվում են ՀՀ 400 քաղաքացիներ, որոնցից 80 պետք է վերադարձվեն Հայաստան ռեադմիսիոն համաձայնագրի շրջանակներում: Անցած տարի տվյալ երկրամասից Հայաստան է վերադարձվել 15 քաղաքացի:

Միաժամանակ բոլոր հանդիպումների ընթացքում շեշտվել է, որ 2018թ-ի առաջին 9 ամիսների ընթացքում նկատվում է Հայաստանից ԵՄ անդամ երկրներում ապաստան հայցողների թվի նվազում՝ 2017թ-ի առաջին 9 ամիսների հետ համեմատ (2017 հունվար-սեպտեմբեր՝ 5125 գործ, 2018 հունվար-սեպտեմբեր՝ 3775 գործ):

Այցի առանցքային հանդիպումը կայացավ Գերմանիայի ներքին գործերի պետքարտուղար դոկտոր Հելմութ Թայխմանի հետ: Վիզաների ազատականացման երկխոսության մեկնարկից առաջ գերմանական կողմը բարձրացրեց երկու հիմնական խնդիր՝ առավել մեծ քանակով ՀՀ քաղաքացիների ազատ մուտքի պարագայում անօրինական կեցություն հաստատելու կամ ապաստանի դիմելու հավանականությունը, իսկ երկրի ԱԳՆ քաղաքական տնօրենի տեղակալ, Հավարային Կովկասի հարցերով հանձնակատար Միխայել Զիբերթն էլ նշեց, որ եվրոպական կողմն ընդհանրապես կցանկանար հասկանալ վիզաների ազատականացման արդյունքները Վրաստանի և Ուկրաինայի պարագայում մինչև Հայաստանի հետ առաջ շարժվելը: Ի պատասխան նշված դիտարկումներից առաջինի՝ շեշտվել է, որ գործուն ռեադմիսիոն համակարգի առկայության դեպքում անօրինական կացության և ապաստանի դիմելու ռիսկները լրջորեն կրճատվում են, իսկ հայկական կողմը 2018թ-ի ընթացքում դրական պատասխան է տվել գերմանական կողմի ռեադմիսիոն հայցերի 87%-ի դեպքում: Ինչ վերաբերվում է Վրաստանի և Ուկրաինայի դեպքերին, նշվել է, որ ՄԾ-ի իրականացրած մոնիթորինգի արդյունքում արձանագրվել է, որ այդ երկրների միգրոցիոն պրոֆիլներում նշանակալի փոփոխությունների վիզաների ազատականացման արդյունքում տեղի չեն ունեցել:

Ռեադմիսիոն համաձայնագրի՝ Գերմանիայի հետ կիրարկման արձանագրության չստորագրված լինելու հարցը հիշատակել է ԳԴՀ ՆԳՆ վերադարձի քաղաքականության բաժնի տնօրեն Քրիստիան Կլոսը, ինչին ի պատասխան ՄԾ պետը նշել է, որ հայկական կողմն իր մասով կատարել է դիտարկումները և փաստաթուղթը գտնվում է

	գերմանական կողմում: Այցի ավարտին գերմանական կողմը փաստաթղթի՝ իրենց կատարած փոփոխություններով տարբերակը փոխանցել է հայկական կողմին: Փաստաթղթի թարգմանության և ներքին համաձայնեցման գործընթացը սկսված է: Բարձրացվել է նաև Հայաստանն «անվտանգ երկրների ցանկում» ընդգրկելու մասին հարցը, ինչին ի պատասխան գերմանական կողմը շեշտել է, որ արդեն իսկ առկա առաջարկությամբ այդ ցանկ են ընդգրկվելու Մարոկկոն, Թունիսն ու Վրաստանը, իսկ հաջորդ առաջարկությունների փաթեթում ամենայն հավանականությամբ կներառվի նաև Հայաստանը: Վերաինտեգրման ծրագրերի իրականացման անհրաժեշտության մասին հարցը բարձրացվել է բոլոր հանդիպումների ընթացքում, այդ թվում նաև Բունդեսթագի ՆԳ հարցերով մշտական հանձնաժողովի նախագահ Անդրեա Լինդհոլցի հետ հանդիպման ընթացքում: Գերմանական կողմը հետաքրքրություն է արտահայտել նման ծրագրերի իրականացման առնչությամբ, ինչի վերաբերյալ քննարկումներ կանցկացվեն և կոնկրետ ծրագրեր կներկայացվեն առաջիկա ամիսների ընթացքում՝ հաշվի առնելով, որ տկն. Լինդհոլցը պատվիրակության ղեկավար, փոխոստիկանապետ Հովհաննես Քոչարյանի կողմից հրավիրվել է Հայաստան և այցելելու պատրաստակամություն է հայտնել:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը. Հայկական կողմին է փոխանցվել Ռեադիմիսիոն համաձայնագրի՝ Գերմաիայի հետ կիրարկման արձանագրությունը, որի թարգմանությունն ու ներքին համաձայնեցման գործընթացն արդեն իսկ մեկնարկել է: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել երկկողմն վերաինտեգրման ծրագրերի իրականացման հարցում (գերմանական կողմն արդեն իսկ աջակցում է ERRIN ծրագրին, որի շրջանակներում օժանդակություն է ցուցաբերվում ԵՄ անդամ 15 պետություններից ՀՀ վերադարձ(վ)ող անձանց):
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները. Առաջարկվել է նաև գերմանական կողմի օժանդակությունն ուղղել Հայաստանում բժշկական ծառայությունների որակի զարգացմանը, մասնավորապես քաղցկեղի բուժման և դիալիզի հարցերում, քանի որ այդ հիվանդություններով ՀՀ-ից ապաստան հայցողների թիվը Գերմաիայում մեծ է: Այս հարցով քննարկումները կշարունակվեն համապատասխան գերատեսչությունների ներգրավմամբ:

	Առաջարկվել է առավել մեծ ուշադրություն դարձնել վերաինտեգրման ծրագրերի իրականացման ՀՀ-ում Գերմանիայից վերադարձված քաղաքացիների շրջանում: Նշված քննարկումներն առավել առարկայական դարձնելու նպատակով ԳԴՀ ՆԳՆ վերադարձի քաղաքականության բաժնի տնօրեն Քրիստիան Կլոսը առաջիկայում կայցելի Հայաստան:
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 21.09.2019